ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՐ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ողջոյն եւ օրհնութիւն

Հայութեան տարագիր զաւակների համար ինչ ուղղութեան և պատկանէին, ինչ քաղաքական հոսանքների և հետևէին նրանք, եկեղեցին միշտ եղել է միութեան և համերաշխութեան կապ։ Աշխարհային զանազան հոսանքներին հետևողները եկեղեցուն մօտեցել են որպէս ճշմարիտ հայ քրիստոնեայ երկիւղածութեամբ հաւատարապէս նախանձախնդիր լինելով եկեղեցական օրէնքներին, կարգերին ու կանոններին։ Այդ նախանձախնդրութիւնը առաւել ևս անհրաժեշտ է Ձեզ, օտարութեան մէջ, մայր երկրի կարօտով ապրողներիդ։ Միակ աւանդը, որ մայր երկրից կայ Ձեզ մօտ, այդ եկեղեցին է, և դուք դրան պէտք է պահպանէք որպէս բիբ ական։ Մինչ դեռ բաւական ժամանակից ի վեր, դուք, սիրելիք մեր ի Քրիստոս, աշխարհային կուսակցութիւնների հետևանքով երկպառակուած, իւրաքանչիւր կուսակցութիւն ոգի ի բռին տքնում է եկեղեցու խաղաղութիւնը և եկեղեցական կարգերը զոհել իւր հաճոյքին, եկեղեցու շուրջն ու եկեղեցու մէջ տեղի են ունենում ցաւալի ընդհարումներ, որով յաչս օտարաց աղարտւում է եկեղեցու սրբութիւնն ու նուիրականութիւնը և հայ անունը, որ միշտ յարգելի եղած է յաչս օտարաց։

Մայր Աթոռս վարչութեան և Կ. Պոլսոյ պատրիարքարանի կարգադրութիւններն ու յորդորները մնացել են «ձայն բարբառոյ յանապատի» և ահա այսօր մեր ստացած գրութիւններից ու լրագրների մէջ տպուած տեղեկութիւններից տեսնում ենք, որ տեղիդ եկեղեցական վարչութիւնը կազմալուծուած է. եկեղեցական պաշտօնեաներից ոմանք չկարողանալով հանդուրժել ներկայ դրութեան՝ է որ հրաժարուել են և է որ հրաժարւում են, ոմանք՝ էլ

ազդարարութիւն են տացել հրաժարուելու, և այս բոլորը Տ. Մուշեղ եպիսկոպոսի ցաւալի խնդրի առիթով, որ թերևս կարգի դրուի նորընտիր հայրապետի ձեռքով։ Մենք, որ Տեղակալն ենք Սրբազնագոյն Հայրապետի, պարտաւոր ենք մեզ յանձնուած աւանդը նոյնութեամբ պահել և յանձնել նորընտիր Հայրապետին. ուստի յանուն Աստուծոյ, ի սէր մեր ամենանուիրական սրբութիւնների և խաղաղութեան եկեղեցու, յորդորում ենք ձեռնթափ լինել Տ. Մուշեղ եպիսկոպոսի առաջնորդ լինելու կամ չլինելու խնդրից, եղած դրութեան համակերպուել, կուսակցական պայքարը եկեղեցու մէջ և եկեղեցու շուրջը չվարել։ Մերձենալ եկեղեցուն իբրև հայ քրիստոնեայ երկիւղածութեամբ, յարգել եկեղեցական օրինական իշխանութիւնը և նրա կանոնական անօրէնութիւններին համակերպելով պատկառելի կացուցանել այն օտարների առաջ. մինչև որ եկեղեցու ընտրուած Գլուխը—Ամենայն Հայոց Հայրապետը-ս. Օծման շնորհիւ ստանձնելով եկեղեցու կառավարութեան դեկը, գործերին ըստ հանգամանաց ուղղութիւն կը տայ։

Եւ Աստուած սիրոյ և խաղաղութեան եղեցի ընդ ձեզ ամենեսին. ամէն։

Տեղակալ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց

Գէորգ Արքեպիսկոպոս

2 սեպտեմբերի 1911 ամի
Թ. 1917
Ս. Էջմիածին